

## ՂԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Օրինականությունն իրավագիտության կենտրոնական հարցերից մեկն է, իրավունքի ընդհանուր տեսության, իրավունքի առանձին ճյուղերի ուսումնասիրության առարկան: Հայաստանի Հանրապետությունում, ինչպես իրավական կամ իրավականի ձգտող մյուս երկրներում, օրինականությունը հռչակվել է որպես պետական կարգավորման բոլոր ոլորտները թափանցող կարևորագույն համակարգատեղծ սկզբունք-մեթոդ: Այն իր կոնկրետացումն է ստանում իրավունքի բոլոր ճյուղերում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մաս):

Օրինականության էության և հասկացության վերաբերյալ հայ և օտարերկրյա իրավաբանական գրականության մեջ արտահայտվել են տարբեր կարծիքներ, որոնցից մենք առանձնացնում ենք Մ. Ստրոգովիչի տեսանկյունը, ըստ որի՝ «օրինականությունը բոլոր պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների, պաշտոնատար անձանց, քաղաքացիների կողմից խորհրդային (այն ժամանակների հետ) օրենքների խիստ և անշեղ կատարումն ու պահպանումն է»<sup>1</sup>: Ժամանակի հրամայականը, սակայն, պայմանավորել է վերը բերված սահմանման փոփոխման անհրաժեշտությունը, քանի որ վերջինս չի արտահայտում ուսումնասիրվող հասկացության մասին պատկերացումներ ձևավորող երևույթների բազմազանությունը, ինչն իր հերթին թույլ չի տալիս բնորոշելու դրա բարոյական բնույթը: Բացի դրանից՝ բերված սահմանումը կրում է

քաղաքական-իրավաբանական բնույթ: Խորհրդային մեկնաբանման առանձնակի թերություն կարող ենք դիտարկել նաև լոկալ օրենքի գերակայությունը և դրա պոզիտիվիստական մեկնաբանությունը, ինչը բացառում էր դրա գնահատականն իրավունքի ընդհանուր ընդունելի սկզբունքների և միջազգային իրավական չափորոշիչների տեսանկյունից:

Հեղինակների մեծ մասը դատական ակտերի օրինականությունը և հիմնավորվածությունը դիտարկում է համատեղ: Օրինակ Մ. Գ. Ավդյուկովը, դիտարկելով դատական ակտերին վերագրվող հիմնական պահանջները և դրանց թվում առանձնացնելով օրինականությունը և հիմնավորվածությունը, պնդում է, որ օրինականությունը լայն իմաստով բովանդակում է նաև հիմնավորվածության պահանջը: «Դատական ակտի օրինականություն» ասելով հեղինակը նկատի է ունենում գործի քննության շրջանակում դատարանի կողմից նյութական և դատավարական իրավունքի գործող նորմերին հստակ և աներկբա հետևելը: Հեղինակը գտնում է, որ օրինականությունն արտահայտվում է դատարանի կողմից կողմերի միջև իրավահարաբերությունների հաստատման գործում՝ առկա փաստական և իրավական հիմքերի առկայության պայմանով: Դատական ակտն օրինական է, եթե դատարանը յուրաքանչյուր գործով ակտ ընդունում է իրականության հետ համապատասխանության և դա հավաստող փաստերի առկայության դեպքում միայն<sup>2</sup>:

Հաջորդ հեղինակը, որը դատական ակտի օրինականությունն ուսումնասիրում է դրան ներկայացվող այլ պահանջների հետ

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2019 7 - 8 (241-242)

ՂԱՏԱԿԱՆ  
Իշխանություն



փոխկապակցվածության համատեքստում, Վ. Ն. Շչեգլովն է: Այս հեղինակն օրինականությունը դիտարկում է որպես դատական ակտի որակն արտահայտող պահանջ, ինչը պայմանավորված է դատարանի կողմից կոնկրետ գործի շրջանակում նյութական իրավունքի նորմերի ճիշտ կիրառմամբ<sup>3</sup>: Դատական ակտին ներկայացվող այլ պահանջների հետ փոխկապակցվածության համատեքստում հեղինակը օրինականությունը սահմանում է որպես գործի փաստական հանգամանքների վերաբերյալ դատարանի կողմից օբյեկտիվ իրողության արտահայտում: Հեղինակը միաժամանակ օրինականությունը դիտարկում է նաև պատճառաբանվածության հետ սերտ փոխկապակցվածության համատեքստում, որը, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, դատական ակտի ոչ պակաս կարևոր որակական հայտանիշներից է:

Վերը նշված հեղինակն ընդգծում է, որ գործի լուծման շարժառիթները տրամաբանություն և հաշտողականություն են հաղորդում դատարանի գործունեությանը, որը միտված է դատական ակտի կայացմանը, բարձրացնում են վերջինիս դատարարական նշանակությունը և հիմք են ապահովում օրինականության և հիմնավորվածության ստուգման համար<sup>4</sup>:

Ն. Ա. Չեչինան օրինականությունն ուսումնասիրում է՝ պայմանավորելով այն հետևյալ հիմնադրույթների առկայությամբ.

- դատարանի կողմից քննության առնված նորմերի պարտադիր իրավական որակում,
- որոշման տեքստում կիրարկված նորմերին հղումների առկայություն,
- վեճի քննություն և որոշման կայացում քաղաքացիադատավարական իրավունքի գործող նորմերի խիստ պահպանմամբ<sup>5</sup>:

Ընդհանրացնելով նշված հեղինակների կարծիքները՝ կարող ենք փաստել, որ մասնագիտական գրականության մեջ տարածված է այն հիմնական կարծիքը,

ըստ որի՝ դատական ակտն օրինական է, եթե այն կայացվել է դատավարական նորմերի պահպանմամբ: Այդպիսի կարծիք են արտահայտել նաև Ն. Ի. Տկաչևը, Ա. Ֆ. Կլեյմանը, Ե. Վ. Խախալևան, Ա. Տ. Բոնները, Ի. Կ. Կոմիսարովը, Ա. Բ. Աբուշենկոն<sup>6</sup> և այլք:

Ի. Ա. Վոլկովայի կարծիքով՝ դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը ենթադրում է, որ՝

- այն ընդունվել է դատավարական նորմերի լիարժեք պահպանմամբ և տվյալ իրավահարաբերության նկատմամբ կիրառման ենթակա նյութական նորմերի հիման վրա,
- գործի համար նշանակություն ունեցող բոլոր փաստերը հաստատված են համապատասխան ապացույցներով, որոնք բավարարում են բույլատրելիության և վերաբերելիության պահանջներին<sup>7</sup>:

Ն. Ի. Տկաչովը նշում է, որ միջանկյալ դատական ակտն օրինական է, եթե դատարանի գործունեությունը դատավարական նորմերի իրացման (պահպանում, կատարում, օգտագործում և կիրառում) հարցում իրավաչափ է<sup>8</sup>:

Մեր ընկալմամբ, դատական որոշման օրինականության հատկանիշը օրենքում մատնանշված պահանջներին դատական որոշման համապատասխանությունն է: Որոշումը համարվում է օրինական, եթե այն ընդունվել է քաղաքացիական և դատավարական իրավունքի նորմերի հստակ պահպանմամբ: Որոշումների ընդունման ժամանակ օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին հղման կարևորությունը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ այդ հղման բացակայությունը կարող է վերաբնեիչ և վճռաբեկ ատյանների կողմից գնահատվել որպես անօրինական որոշում, այսինքն, օրենքի չկիրառումը դրա չեղարկման հիմք է համարվում:

Այս առումով հետաքրքրական է Ռուսաստանի փորձը: Բացատրելով դատական որոշման էությունը՝ ՌԴ գերա-

գույն դատարանն իր արձանագրության մեջ ներկայացնում է դատական որոշման օրինականություն հասկացությունը՝ «որոշումը համարվում է օրինական միայն այն դեպքում, եթե այն ընդունվել է խստորեն հետևելով դատավարական իրավունքի նորմերին, և համապատասխան է տվյալ իրավահարաբերությունների համար կիրառելի քաղաքացիական իրավունքի նորմերին կամ անհրաժեշտ դեպքերում հիմնված է համանման իրավունքի կամ համանման օրենքի վրա»<sup>9</sup>:

Այսպիսով, ՌԴ գերագույն դատարանի որոշմամբ՝ կիրառման ենթակա իրավունքի նորմերի միջև հակասությունների դեպքում կիրառվում է մրցակցող նորմի նկատմամբ գերակա ուժ ունեցող նորմը: Համանման բնութագրում է պարունակվում ՌԴ արբիտրաժային դատավարության օրենսգրքի 6-րդ գլխի 13-րդ հոդվածում: Դրա հետ մեկտեղ ՌԴ արբիտրաժային դատավարության օրենսգրքի 1-ին գլխի 13-րդ հոդվածում մատնանշվում է գործարար շրջանառության սովորույթը:

Իր որոշումներում ՌԴ գերագույն դատարանն ուշադրություն է դարձնում նաև դատական իշխանության մարմինների կողմից պաշտոնական մեկնաբանությամբ ակտերի կիրառման վրա<sup>10</sup>:

Անցում կատարելով հայրենական փորձառությանը՝ փաստենք, որ քաղաքացիական դատավարության լույսի ներքո ՀՀ քաղաքացիական դատավարության այլևս չգործող օրենսգրքում «օրինականություն» հասկացությունը քննության էր առնվում դատական վճռին ներկայացվող պահանջների համատեքստում: Այդ օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ մասում նշվում էր, որ «Դատարանի վճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված: Դատարանը վճիռը հիմնավորում է միայն դատական նիստում հետազոտված ապացույցներով»: 2018 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածը սահմանում է դատական ակտի օրինականությունը՝ «Դատական

ակտն օրինական է, եթե այն կայացվել է Սահմանադրության, սահմանադրական օրենքների, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի, այլ օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառելի են տվյալ գործը քննելիս և լուծելիս»: Ստացվում է, որ մեր մտահոգությունն անհետացել է նոր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունմամբ:

Պրոֆեսոր Ռ. Գ. Պետրոսյանն իրավացիորեն նկատում է, որ օրենքը վճռի օրինականության և հիմնավորվածության որպես վճռին ներկայացվող կարևորագույն պահանջների բովանդակությունը չի բացահայտում, սակայն դրանք վաղուց մեկնաբանված են դատավարագիտության մեջ և պրակտիկայում<sup>11</sup>: Վճիռն օրինական է, եթե այն կայացվել է գործով կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմերին համապատասխան և դատավարության նորմերի պահանջների պահպանմամբ կամ, անհրաժեշտության դեպքում, վիճելի հարաբերությունը կարգավորող նյութաիրավական օրենքի կամ այլ իրավական ակտի բացակայության դեպքում դատարանը կիրառում է նույնանման հարաբերություններ կարգավորող օրենքի նորմերը (օրենքի անալոգիա): Նման նորմերի բացակայության դեպքում դատարանը վեճը լուծում է՝ ելնելով իրավունքի ընդհանուր սկզբունքներից (իրավունքի անալոգիա): Դատավարական նորմերն օրենքի անալոգիայով չեն կիրառվում: (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մաս):

Այլ կերպ ասած՝ օրինական է համարվում այն վճիռը, որը՝

ա) դատարանի կողմից կայացվել է քաղաքացիական դատավարական ձևի պահանջներին խիստ համապատասխան իրականացված դատավարական գործունեության արդյունքում, այսինքն՝ դատավարության նորմերի պահանջների



պահպանմամբ,

բ) հիմնված է դատարանի կողմից վարույթի առարկայի՝ վիճելի նյութական իրավահարաբերության նկատմամբ նյութական իրավունքի նորմերի ճիշտ կիրառման վրա,

գ) պարունակում է կողմերի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դատարանի՝ օրենքի, այլ իրավական ակտերի, պայմանագրի և գործարար շրջանառության սովորույթների վրա հիմնված, ըստ էության, ճիշտ հետևություններ<sup>12</sup>:

Դատական ակտերին ներկայացվող պահանջները չպահպանելը հանգեցնում է դատարանի վճռի անօրինական ճանաչելուն: Դատարանի վճիռը կարող է համարվել անօրինական դատական սխալի հետևանքով: Դատական սխալ ասելով հասկանում ենք նյութական իրավունքի նորմերի սխալ կիրառումը, որն ազդում է գործի ելքի վրա: Օրենսդիրը սահմանում է դատական սխալի, հետևաբար և դատական ակտի բողոքարկման հետևյալ հիմքերը: Դատական ակտի բողոքարկման հիմքերը սահմանված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 363-րդ հոդվածով, ըստ որի նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը, դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը, նոր երևան եկած կամ նոր հանգամանքը ծառայում են որպես դատական ակտի բողոքարկման հիմք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 364-րդ հոդվածով սահմանվում է, որ նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը

- 1) չի կիրառել այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը պետք է կիրառել:
- 2) կիրառել է այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք է կիրառել:

3) սխալ է մեկնաբանել օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը:

Նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածով սահմանվում է դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը, ըստ որի դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի, ըստ էության, ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

- 1) դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, այդ թվում՝ այնպիսի դատավորի կողմից, ով պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել,
- 2) դատարանը գործը քննել է բողոք բերած անձի բացակայությամբ, որը չի համարվում ծանուցված դատական նիստի ժամանակի և վայրի մասին,
- 3) դատական ակտն ստորագրված կամ կնքված չէ,
- 4) դատական ակտն ստորագրված կամ կնքված չէ այն կայացրած դատավորի կողմից,
- 5) դատական ակտը կայացրել է այն դատավորը, որը տվյալ գործը քննող դատարանի կազմում ընդգրկված չէ,
- 6) գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը,
- 7) դատական նիստի արձանագրումը կատարվել է այնպիսի թերություններով, որոնք անհնար են դարձնում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը,

8) գործի քննության ընթացքում չի ապահովվել գործին մասնակցող անձի՝ թարգմանիչ ունենալու իրավունքը.

9) դատական ակտը չունի պատճառաբանական մաս,

10) դատական ակտն ազդում է գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների և պարտականությունների վրա, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը քննվող գործի մասին ծանուցել է տվյալ անձին, սակայն նա չի ցանկացել ներգրավվել գործին.

11) ստորադաս դատարանում առկա է եղել գործի վարույթը կարճելու հիմք.

12) ստորադաս դատարանում առկա է եղել հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու հիմք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածով սահմանվում է նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերաքննիչ բողոք բերելու հիմքերը:

Նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝

1) բողոք բերած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները գոյություն են ունեցել գործի լուծման պահին, հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին ու դատարանին, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն,

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ վկայի սուտ ցուցմունքները, փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացությունը, թարգմանչի ակնհայտ սխալ թարգմանությունը, գրավոր կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը հանգեցրել են ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն,

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ բողոք բերած անձ չհանդիսացող գործին մասնակցող անձինք կամ նրանց ներկայացուցիչները կատարել են գործի քննու-

թյան հետ կապված հանցավոր արարք, որը հանգեցրել է ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն, կամ գործի քննության հետ կապված հանցավոր արարքը կատարել է դատավորը:

Ինչպես վերը նշեցինք, դատական սխալը հետևանք է նյութական իրավունքի նորմի խախտման կամ սխալ կիրարկման: Գործն, ըստ էության, լուծելը ենթադրում է դատավարության առարկայի՝ վիճելի իրավահարաբերության նկատմամբ նյութական իրավունքի նորմերի կիրառում: Չնայած այն հանգամանքին, որ տվյալ դեպքում օրենսդիրն օգտագործում է «նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը» (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 364-րդ հոդված) ձևակերպումը, դատավարության մեջ նյութական իրավունքի նորմերի իրացման միակ ձևը իրավական նորմերի (այդ թվում՝ արգելյալ նորմերի) կիրառումն է<sup>13</sup>: Վեճը, ըստ էության, լուծելու համար դատարանը քաղաքացիական դատավարական ձևի պահանջներին խիստ համապատասխան իրականացված դատավարական գործունեության արդյունքում (դատավարական նորմերի պահանջների պահպանմամբ ու ճիշտ կիրառմամբ) պետք է պարզի վիճող կողմերի իրական հարաբերությունները, տա դրանց իրավաբանական ճիշտ որակումը, գտնի այն նորմը կամ նորմերը, որոնք կարգավորում են տվյալ վիճելի իրավահարաբերությունը, ճիշտ մեկնաբանի (պարզաբանի) վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավական նորմի (նորմերի) բովանդակությունը, դրանց հիման վրա պարզի կողմերի սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների ծագման, փոփոխման կամ դադարման հիմք հանդիսացող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը և, ըստ էության, ճիշտ հետևություններ անի կողմերի իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ՝ դրանք դատավարական



օրենքով սահմանված կարգով ձևակերպելով վճռում<sup>14</sup>: Այս համատեքստում դատարանի վճիռն օրինական ճանաչվել չի կարող, եթե նշված գործընթացի իրականացման ընթացքում բոլոր է տրվել շեղում, ինչն ինքնին նյութական իրավունքի նորմի սխալ կիրառում է:

Դատական հաջորդ սխալն առաջանում է այն դեպքում, երբ դատարանը կիրառում է կիրառման ոչ ենթակա իրավական նորմ, ինչը հետևանք է դատարանի կողմից իրավահարաբերության սխալ մեկնաբանման, ինչն իր հերթին կարող է հանգեցնել ոչ միայն կողմերի իրավունքները և պարտականությունները, այլ նաև կողմերի պատասխանատվությունը սխալ սահմանելուն:

Դատական սխալի հաջորդ դեպքը դրսևորվում է, երբ դատարանը կիրառել է այդպիսի իրավական ակտ ընդունելու իրավասություն չունեցող մարմնի կողմից ընդունված կամ ուժը կորցրած, Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը ոչ համապատասխան ճանաչված, վարչական դատարանի կողմից անվավեր ճանաչված իրավական ակտ: Կիրառման ոչ ենթակա իրավական ակտի կիրառումն առկա է նաև այն դեպքերում, երբ դատարանը կիրառման ենթակա իրավաբանական ավելի բարձր ուժ ունեցող ակտի փոխարեն կիրառել է դրա համեմատ ստորադաս և իրավահարաբերությունն այլ կերպ կարգավորող իրավական ակտ: Իրավական նորմի սխալ մեկնաբանությունն առկա է այն դեպքերում, երբ դատարանը, ճիշտ որակելով կողմերի իրավահարաբերությունը, սխալ է պարզաբանել վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավական նորմի բովանդակությունը, վերջինիս վերլուծության արդյունքում, ըստ էության, սխալ հետևություններ է արել կողմերի սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

Վճռի օրինականությունը մեծապես կախված է ոչ միայն դատարանի կողմից վիճելի իրավահարաբերությունը կարգա-

վորող նորմերը ճիշտ ընտրելուց, այլ նաև դրանց իմաստի և բովանդակության ճիշտ մեկնաբանությունից: Նյութական իրավունքի նորմերը ճիշտ կիրառելու համար դատարանը պետք է հստակ բացահայտի դրանց բովանդակությունը՝ պահպանելով իրավական նորմը մեկնաբանելու կանոնները:

Դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Վերոգրյալ իրավակարգավորումներից ակնհայտ է, որ դատական սխալի առկայության կամ բացակայության հաստատումը հանդիսանում է ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտի բեկանման հիմք, հետևաբար և ենթակա է հաստատման վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելուց հետո գործն, ըստ էության, լուծելու փուլում:

Քաղաքացիական գործերով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներում հաճախ հանդիպում են հետևյալ ձևակերպումները. «Վերլուծելով բողոքի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք բավարար չեն եզրահանգելու, որ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ գործի ելքի վրա ազդած դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում: Հետևաբար, բերված բողոքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածով նախատեսված հիմքերը հիմնավորված չեն<sup>15</sup>»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ վճռաբեկ բողոքը բերվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 363-րդ հոդվածով նախատեսված հիմքերով, որոնք են նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը, դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը, նոր երևան եկած



կամ նոր հանգամանքը: Հետևաբար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածով նախատեսված հիմքերը ներկայացված չեն: Դասակարգվածի փոխարեն Վճռաբեկ դատարանը պարտավոր է գործը վարույթ ընդունելը մերժելիս կոնկրետ նշել այդ հանգամանքները և դրանց բացատրությունները: Ըստ որի՝ նույնաբնույթ ձևակերպումներ հաճախ հանդիպում ենք նաև քրեական գործերով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումներում. «Վերլուծելով բողոքի փաստաթղթերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք բավարար չեն եզրահանգելու, որ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ գործի ելքի վրա ազդած դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանք: Հետևաբար, բերված բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքը հիմնավորված չէ<sup>16</sup>»:

ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներում տեղ գտած վերոնշյալ ձևակերպումները վկայում են այն մասին, որ Վճռաբեկ դատարանը բողոքը վարույթ ընդունելու փուլում գնահատում է դատական սխալի առկայությունն ու դրա՝ գործի ելքի վրա ազդած լինելու հանգամանքը, ինչը ենթակա էր հաստատման ՀՀ Վճռաբեկ դատարանում դատաքննության փուլում:

Վճռաբեկ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին մի շարք որոշումներում այդ դատարանն անդրադառնում է վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի առկայության գնահատմանը վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների միջոցով: Որոշումներում, մասնավորապես, տեղ են գտնում հետևյալ ձևակերպումները. «ՀՀ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի մասին բողոք

բերած անձի հիմնավորումը հերքվում է վերաքննիչ դատարանի որոշմամբ նշված պատճառաբանություններով...»:

Վճռաբեկ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումներում հաճախ մեջ է բերվում հետևյալ պարբերությունը. «Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Մելտեքս» ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսիսյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ 32283/04) գործով 17.06.2008 թվականի վճռով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանության վերաբերյալ արտահայտել է իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ «Վճռաբեկ դատարանի իրավասությունը սահմանափակվում էր միայն իրավունքի հարցերի ուսումնասիրությամբ: Նման հանգամանքներում չի կարելի ասել, որ Վճռաբեկ դատարանը չէր նշել հիմնավորում միայն այն պատճառով, որ այն հաստատել էր ավելի ցածր ատյանի դատարանի եզրահանգումները և ներառել էր դրանք իր որոշումների մեջ»»:

«Մելտեքս» ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսիսյանն ընդդեմ Հայաստանի գործին կատարված հղումները Վճռաբեկ դատարանի որոշումներում ևս մեկ անգամ հաստատում են, որ Վճռաբեկ դատարանը շփոթում է բողոքի ընդունելիության հիմքը դատական ակտի բեկանման հիմքի հետ, քանի որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի մեջբերվող հատվածը վերաբերել է Վճռաբեկ դատարանի գործն, ըստ էության, լուծող դատական ակտին: Իսկ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու կամ վերադարձնելու մասին որոշումների ընդունման հնարավորությունը նույնիսկ նախատեսված չէր այդ ժամանակահատվածում գործող օրենսդրությամբ: Համանման ձևակերպումներ հաճախ հանդիպում են նաև վարչական գործերով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումներում, որտեղ դատական սխալի առկայությունը հերքվում է Վերաքննիչ դատարանի համապատասխան պատ-



ճառաբանություններով:

Քննարկվող հարցի կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թ. ապրիլի 13-ի թիվ ՄԳՌ 873 որոշմամբ ամրագրված դիրքորոշումները մեծ մասամբ կիրառելի են նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխություններից հետո ձևավորված իրավակիրառ պրակտիկայի նկատմամբ: ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ թույլատրելիության հարցի լուծման ժամանակ բուն արդարադատության կանխորոշումը իմաստագրվում է դրա արդյունավետությունը, իսկ բողոքի թույլատրելիության հիմքը շփոթվում է Վարչական դատարանի ակտի բեկանման հիմքի հետ, և որ արդարադատության նման ձևականացումն անհամատեղելի է դրա սահմանադրական իմաստի հետ:

Վերոհիշյալ դեպքերի կապակցությամբ հարց է առաջանում, թե արդյոք վճարեկոթությունը դատական հսկողությամբ, թե՞ դատական վերահսկողության եղանակ է: Կարծում ենք, որ այն կարող է բնորոշվել որպես ստորադաս դատարանի գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողության եղանակ: Վերոհիշյալ դիտարկումը կարելի է հիմնավորել նրանով, որ քրեադատավարական իրավունքի տեսության մեջ, տարբերակելով «հսկողություն» և «վերահսկողություն» եզրույթները, տեսաբանները տարբեր իրավական բովանդակություն են դնում այդ եզրույթների մեջ՝ առաջինը պայմանավորելով որոշակի ենթակայության հարաբերությունների առկայությամբ, ինչը բացառվում է դատական իշխանության մարմինների համակարգի ներսում, որի բնութագրական հատկանիշներից մեկը ներքին անկախության սկզբունքն է: Ինչ վերաբերում է դատական ակտերի «վերանայման ձև» և «ստուգման ձև» եզրույթներին, ապա, կարծում ենք, առավել տեղին է «վերանայման ձև» հասկացության օգտագործումը, քանի որ նախ՝ թե՞՞ ներպետական

և թե՞ միջազգային վերը հիշատակված իրավական ակտերում նշվում է վերանայման իրավունքի մասին, և երկրորդ՝ վերանայումն իրականացվում է ստորադաս դատարանի դատական ակտի օրինականությունը, հիմնավորվածությունը և արդարացիությունը ստուգելու եղանակով, այլ կերպ՝ ստուգումը վերանայման իրականացման ձևն է, դրա բաղկացուցիչ մասը: Բացի դրանից՝ դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումը չի ներառում դատական ակտերի վերանայման բաղկացուցիչ մասը կազմող բողոքարկման գործընթացը: Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ վճարեկ վերանայման կառուցակարգը որպես դատական ակտերի վերանայման ձև, ի տարբերություն դատական ակտերի վերանայման մյուս ձևերի, բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

- 1) այն դատական ակտերի վերանայման հայեցողական ձև է,
- 2) ենթադրում է վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած գործը ըստ էության լուծող դատական ակտերի վերանայում,
- 3) ենթադրում է դատական ակտերի վերանայում սուկ իրավունքի հիմքով,
- 4) ունի հատուկ նպատակային նշանակություն՝ ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը:

Այսպիսով, վճարեկ վերանայման կառուցակարգը կարելի է բնորոշել որպես ստորադաս դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի վերանայման հայեցողական ձև, որի արդյունքում վճարեկ ատյանը, նպատակ ունենալով ուղղելու դատական սխալները և ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը, ստուգում է ստորադաս դատարանի դատական ակտի օրինականությունը, հիմնավորվածությունը և արդարացիությունը՝ նյութական իրավունքի նորմի ճիշտ կիրառման և դատավարական իրավունքի նորմերի պահանջների պահպանման տեսանկյունից:



Ընդհանրացնելով մեր կողմից կատարված ուսումնասիրությունը՝ փաստենք, որ օրինականությունը՝ որպես դատական ակտի պահանջ, ենթակա է ապահովման բոլոր դատական ակտերի համար: Ընդունում ենք հեղինակների

կողմից առաջ քաշված՝ դատական ակտերին ներկայացվող պահանջների միջև փոխկապակցվածության գաղափարը, քանի որ դրանցից յուրաքանչյուրն առանց մյուսների ապահովվել չի կարող:

<sup>1</sup> Տե՛ս Տրոգովիչ Մ.Ս., Социалистическая законность - незабываемый принцип нашей общественной жизни, М., 1969, էջ 4:

<sup>2</sup> Տե՛ս Авдюков М.Г., Судебное решение. М., Госюриздат, 1959, էջ 133:

<sup>3</sup> Տե՛ս Щеглов В.Н., Законность и обоснованность судебного решения, Автореф. дис.... канд. юрид. наук, Томск, 1955, էջ 5:

<sup>4</sup> Տե՛ս Щеглов В.Н., նշվ. աշխ., էջ 8:

<sup>5</sup> Տե՛ս Чечина Н.А., Норма права и судебное решение, Избранные труды по гражданскому процессу. СПб., 2004, էջեր 163-164:

<sup>6</sup> Տե՛ս Ткачев Н.И., Законность и обоснованность постановлений суда по гражданским делам, Саратов, 1987, էջ 49, Клейнман А.Ф., Новейшие течения в советской науке гражданского процессуального права, Гражданский процесс. Хрестоматия: Учебное пособие / Под ред. проф. М.К. Треушниковой, М., 2005, էջ 535-536, Хахалева Е.В., Обоснованность решения суда общей юрисдикции, Автореф. дис. ... канд. юрид. наук, Саратов, 200, էջ 14-15, Боннер А.Т., Применение нормативных актов в гражданском процессе, М., 1980, էջ 57, Комиссаров К.И., Задачи судебного надзора в сфере гражданского судопроизводства, Свердловск, 1971, էջ 24, Абушенко Д.Б., Судебное усмотрение в гражданском процессе, Автореф. дне. ... канд. юрид. наук, Екатеринбург, 1998, էջ 4:

<sup>7</sup> Տե՛ս Гражданский процесс: Учебник / Под ред. А.Г. Коваленко, А.А. Мохова, П.М. Филиппова, - М.: «ИНФРА-М», 2008, էջ 268:

<sup>8</sup> Տե՛ս Ткачев Н.И., Законность и обоснованность судебных постановлений по гражданским делам, - Саратов, 1987, էջ 95:

<sup>9</sup> Տե՛ս П. 2: О судебном решении: постановление пленума Верховного Суда РФ от 19 дек. 2003 г., № 23, //Бюл. Верховного Суда РФ, 2004, № 2, էջ 2:

<sup>10</sup> Տե՛ս О некоторых вопросах применения судами Конституции РФ при осуществлении

правосудия: постановление пленума Верховного Суда РФ от 31 окт. 1995 г., № 8 // Бюл. Верховного Суда РФ, 1996, № 1; О применении судами общей юрисдикции общепризнанных принципов и норм международного права и международных договоров РФ: постановление пленума Верховного Суда РФ от 10 окт. 2003 г., № 5 // Бюл. Верховного Суда РФ. 2003. № 12.

<sup>11</sup> Տե՛ս Պետրոսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն / (իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Լ. Չ. Թադևոսյանի խմբագրությամբ): Չորրորդ հրատարակություն, Եր., Ոսկան Երևանցի, 2012, էջ 403:

<sup>12</sup> Տե՛ս Մեղրյան Ս. Գ., Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Երևանի պետ. համալսարան, Եր., ԵՊՀ հրատ, 2010, էջ 74:

<sup>13</sup> Տե՛ս Сахнова Т.В., Курс гражданского процесса: теоретические начала и основные институты, М., «Волтерс Клувер», 2008, էջ 436:

<sup>14</sup> Տե՛ս Մեղրյան Ս. Գ., Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Երևանի պետ. համալսարան, Եր., ԵՊՀ հրատ, 2010, էջ 79:

<sup>15</sup> Տե՛ս օրինակ՝ թիվ ԿԳ-1/0495/02/12, ԱՎԳ-0587/02/12, ԵԱԶԳ/1066/02/11, ԱԲԳ-1/0369/02/10, ԵԱԳԳ/1256/02/11, ՇԳ-3/0305/02/10 քաղաքացիական գործերով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները: /Որոշումները կայացվել են մասիկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հիմքով, սակայն մեր կողմից ներկայացված մեջբերումները համապատասխանեցված են գործող օրենսդրությանը/:

<sup>16</sup> Տե՛ս, օրինակ, ԵԷԳ/0139/01/10, ԿԳ-1/0061/01/12, ԼԳ-0192/01/11 քրեական գործերով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները:



## RESUME - РЕЗЮМЕ

### LEGALITY OF JUDICIAL ACTS

**Gevorg Narinyan**

*Judge of Bankruptcy Court of Armenia*

This article refers to the legality of judicial acts. The essence and content of the aforementioned principle-method is analyzed, the theoretical questions and the author's own judgment are confirmed by practical examples.

**Keywords:** *judicial acts, legality, validity, motivation, Court of Cassation, appeal, principle-method.*

### ЗАКОННОСТЬ СУДЕБНЫХ АКТОВ

**Геворг Наринян**

*Судья Суда по делам банкротства*

В статье рассматривается законность судебных актов. Нами проанализированы сущность и содержание упомянутого принципа-метода, изучаются теоретические вопросы и собственная точка зрения автора, подтвержденные примерами из практики.

**Ключевые слова:** *судебные акты, законность, обоснованность, мотивированность, Кассационный суд, апелляция, принцип-метод.*

**Բանալի բառեր** - *դատական ակտեր, օրինականություն, հիմնավորվածություն, պարճառարանվածություն, Վճարելի դատարան, բողոքարկում, սկզբունք-մեթոդ:*

**Գ. Նարինյան** - ՀՀ սնանկության դատարանի դատավոր, էլ. փոստ՝ g-narinyan@mail.ru

Ներկայացվել է խմբագրություն՝ 23.07.2019, տրվել է գրախոսության՝ 27.07.2019, երաշխավորվել է իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռ. Պետրոսյանի կողմից, ընդունվել է տպագրության՝ 26.09.2019

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2019 7 - 8 (241-242)

ԴԱՏԱԿԱՆ  
Իշխանություն